Հ ա յ տ ա ր ա ր ու թ յ ու ն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Զրահովիտի Վլ. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, ինֆորմատիկայի (6 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ, 4 դասաժամ), կերպարվեստի (4 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), աշխարհագրության (10 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31-ից մինչեւ սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 15- ին՝ ժամը 11:00-ին, 13:00-ին, 15:00-ին, 17:00- ին, ՀՀ Արարատի մարզի Զրահովիտի Վլ. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Զրահովիտ, 6-րդ փողոց, թիվ 37: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 74-44-94, (095) 77-79-11 հեռախոսահամարներով: